

ՃԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 Ժր.
Տարեկան	6 »
Վեցամսեայ	15 »
Մասնատար համար	8 »

Սեփարիայի համար	3 սյր.
Տարեկան	1.50 »

Մանուգրան սոյր սոս ցին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ հ. երեսին աւելի ակզաւեւերու համար 20 0/0 զեղջ կըլլայ:

Վառնայի համար մի օր 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

ՈՐԱԳԻՐ ԱԶԳԱՏԻՅ՝ ՔԱՂՊՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ՝ ՏՊՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նամակ եւ սրակ որիկ նվարագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արսասահմանի համար
մեյք
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
մեյք
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չեւ տրուիր

ՇՈՐՈՒՄ Ի ԲԱՃԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃՆԵՒԻՆԸ ՊԵՏՔ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՍԱՍՆՈՅ ՇԱՐՋՈՒՄՆԵՐԸ

—)o(—

Անցեալ համարով մեր ընթերցողներին ծանօթացրին Սասունում կատարված դէպքերի հետ ախտը էլ, կրկին «Բրո Արմենիա» լից, թարգմանաբար արտատրւում ենք մանրամասն նկարագրութիւնը այն խոչոր գործերի, որոնք հայ յեղափոխութեան, ըմբոստացման պատմութեան մէջ ամենափառատուր եւ յուսատու էջերից մէկը պէտք է կազմեն:

Այդ նամակները կարգաւորցնելով մենք պարզօրէն տեսնում ենք թէ՛ թուրք կառավարութիւնը որչափ ակնածանք է զգացել չէպի Սասունցիք ու ֆէտայիները, որովհետեւ նրանց դէմ է զուրս եկել մօտ քառասուն հազար հոգուց կազմված բանակով եւ 15 թնդանօթներով: Տիգրի է ունեցել մի պատերազմ: Սասունցիք քայքայելով զրեթէ մի աճրոյց ամիս կուել, դիտարկել են, բազմապատիկ ուժեղ եւ իրենցից լաւ զինված թշնամուն: Վերջի վերջոյ ընկճվելով թշնամու թնդանօթներից, խոչոր քանակութիւնից, լքել են իրենց գիւղերը, ձեր կանանց, այրերին ու երեխաներին եւ հեռացել գէպի անմաշելի դիրքերը, որպէսզի յարմար առթիւ կարողանան կրկին անսպասելի հարւածներ տալ թշնամուն:

Սասունցիք եւ նրանց հետ գտնված հայ ֆէտայիները թշնամուց բաւական զոհ խելուով, գրեթէ յոյների չափ դիմադրել են թուրք զօրքին եւ խուժանին, կառող տարրը ու վարիչները անձնատուր չեն եղել, չեն անպատուել հայ ապստամբի գրոշակը, սուրը եւ հրացանը: Այս վեհ երեւոյթի առջեւ հայը կարող է միայն հպարտանալ եւ հաւատալ, թէ հեռու չէ այն օրը, երբ թուրքը պէտք է զգայ թէ՛ հային ճշն չելու համար աւելի մեծ ուժեր պէտք են:

Ենթադրվում է թէ այս փառատուր ընդդիմադրութեան շըր-

ջանում կոտորվել է հինգ հազար հոգի: ու այդ ենթադրութիւնը իբրեւ անսխալ իրողութիւն յայտարարվում է հայ հասարակութեան, կցված թրքական արտասուներնեքով ու վայնասուններով գուրպէթ օղլունների կողմից, որոնք միշտ թրքական լրբութիւնը ունեն գլխաւորութիւնները յայտարարած միջոցին չը յայտնել նաեւ դէպքերին կից հայրենիքի եւ հայ ժողովրդի պատիւն ու անունը բարձրացնող միջադէպերի շարքը:

Բայց ինչո՞ւ յայտնել, չէ ո՞ր մեծ գործերը հային աւելի սիրտ կը տան, աւելի եռանդ յայտարարված կռիւը շարունակելու սուլթանական ուժերի դէմ, մինչեւ ծանր լուծը ջախջախել: Ե՛ք թէ գուրպէթ օղլունները, հարազատ թիւրքերի նման կուրանան, կը թագցնեն հայ յաղթանակները, Սուլթանի եւ թուրք զօրքի վարկը բարձրացնելու եւ հային յուսահատեցնելու համար...:

Ենթադրելով թէ 5000 զոհ տալը ճիշդ է, բայց ո՞ր ապստամբ ժողովուրդը իր բռնակալների յարձակումների դէմ զոհ չէ տել, եւ ո՞րն է եղել այն ապուշը, այն լիւրբը, որ կարծել է թէ առանց զոհի մենք կարող ենք մեր իրաւունքները յարգել տալ, մեր բաղձանքներին հասնել: Զոհ տալը մեղք չէ այն պարագային, երբ թշնամուց համապատասխան զոհ ես խլում: Զոհ տալը յուսահատեցուցիչ չէ այն պարագային, երբ ապստամբը փառատուր կուել մէջ է տալիս այդ զոհերը, կատարութեամբ եւ գիտակցօրէն իր իրաւունքները, իր հայրենի հողը պաշտպանելով: Այս փառատուր դիմադրութեան մէջ, կարող էր պատահել որ Սասունցին ամբողջովին զոհվէր: բայց այդ էլ յուսահատական եւ արատաւոր չէր լինի հայութեան համար, որովհետեւ Սասունցին գիտակցաբար զոհվում է ընդհանուր հայրենիքի

դատը լուծելու բաղձանքով: Մօտ տաս տարի առաջ մենք մօտ հարիւր հազար զոհ տելնք, առանց կարենալու աշխարհին ապացուցել թէ հայը ընդունակ է մասսայական կռիւ մղել եւ իր իրաւունքները պաշտպանել, ու մեր ճակատը մրտովեց, մենք ոչխար տիտղոսը ընդունեցինք այն Եւրոպայից, որը միայն առիծացած հայրենաւէր ըմբոստներին է սիրում օգնութեան հասնել:

Իսկ այսօր հինգ հազար զոհով, կրկնում ենք, եթէ այդ էլ ճիշդ է, աւելի կարողացանք յարգանք ստանալ, որովհետեւ Սասունցին մի ամովան ընթացքում սրբեց մեր ոչխար տիտղոսը, մաքրեց մեր ճակատի մուրը:

Այո, հինգ հազար զոհն էլ քիչ զոհ չէ, մանաւանդ մեզ նրման ժողովրդի համար, որ տառնակ հազարներ արգէն տըւել է: Բայց մենք տաս նեակ հազարներ տելնք, առանց թշնամուց զոհ խելու, առանց գիտակցաբար կուողի վարկը ըստանալու, այսօր աւելի քիչ զոհ ենք տել, բայց աւելի մեծ արոյական վարկ ունենք նրանց մօտ, որոնց յարգանքով լի օգնութեանը կարօտ ենք: Ու կարող ենք համոզված լինել, թէ վաղը, ապագայում աւելի քիչ զոհ կը տանք, որովհետեւ մենք վարժվում ենք թուրք մորթել: Թուրքը սովորում է ըմբռնել թէ հային ճնշելու ճմլելու գործը հետզհետէ աւելի մեծ զոհեր է պահանջում իրենից:

Եւ այս մեծ յաղթանակ է հայի համար, այն հայի, որը թուրքի արիւնը իրեն անմատչելի էր համարում: որը թուրքի համար մի ծթած հօտ արժէքը չուէր: Սասունցին զոհեր տեց գիտակցաբար: նրան ոչ ոք չը խաբեց, ոչ ոք նրան գնտեր, հազարաւոր զէնքեր չը խոստացաւ, ոչ Հրայրը, ոչ Անդրանիկ: Սասունցին չուզեց սարկաբար իր լեռները յանձնել թուրքին զօրանոցներ շինելու համար, ու

որոշեց դիմադրել:

Իր այդ որոշման մէջ հաստատ, Սասունցին սիրով փարեց նրանց, որոնք կարող էին այդ դիմադրութիւնը աւելի զօրաւոր, աւելի փառատուր դարձնել, եթէ հակառակը լինէր: Սասունցին տարիներով իր ծոցում չէր պահի հայ ֆէտայիներին, եթէ Սասունցին խաբված լինէր, պաշարման առաջին րոպէներում, թնդանօթների առաջին որոտման պարագային ինքը իր ձեռքով պատառ պատառ կանէր Անդրանիկներին եւ խաղաղութեամբ անձնատուր կը լինէր իր գահիճներին նրանց գուլթը շարժելու համար, որպէսզի կարենայ ստրուկի կեանքը երկարատեւել: Բայց Սասունցին այդպէս չարաւ, ու չէր կարողանել, որովհետեւ նրա երակներում Գուրպէթ օղլունների թրքական արիւնը չէ հոսում: նա ոչ միայն այդպէս չարաւ, այլ հերոս Հրայրի անշնչացած դիակը, որը այլեւս Սասունցուն օգնել չէր կարող, ամենամտանգաւոր պայմաններում, թնդանօթների առումներից հալածվելով գրկեց տարաւ Սերուք Աղբիւրի կողքում տեղաւորեց: Թուրք, հայերը ընդունակ չեն այս վեհանձնութիւնը ըմբռնելու: նրանք թուրք են եւ նրանց սիրտը սեղմվում է հայկական կեանքի վեհափառ երեւոյթների առջեւ:

Ուրեմն փառք եւ պատիւ՝ քաջ Սասունցիներին, նաեւ նրան զիւնակցող հայ ֆէտայիներին, ակնածելի, դողահար յարգանք ընկած առիւծ հերոսների յիշատակին, բայց ոչ թրքացած Գուրպէթ օղլունների յարգանքը, որոնք եթէ մի կերպ Սասուն ընկնեն, հարիւր տեղից զնդակահար կը լինեն, եւ ժայռերից վար նետվելով շների, սգուաւների ու գայլերի բաժին կը դառնան:

ՎԱՐԴՈ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՏՈՐԱՆԵՐԸ

Հայաստանից եկած տեղեկութիւնները շարունակում են արդարացնել մեր բոլոր մտատանջութիւնները :

Այժմ պաշտօնական շրջանակներում վիճում են միայն այրված գիւղերի և կոտորածի զոհերի քանակութեան մասին :

Ես համեմատելիս կը խոստովանիմ որ եթէ այրված գիւղերի թիւը 43ի փոխարէն 21 լինէին, այդ թիւը չը պէտք է բաւէր, արդարացնէր, եւ ստիպողական պահանջ դարձնէր եւրոպայի, մասնաւորապէս Թրանսայի անմիջական միջամտութիւնը :

Այնուամենայնիւ մենք իրաւունք չունենք ձեռքներս ծայրելու նստել, որովհետեւ խնդիրը չէ վերաբերում անակնկալի, այլ առաջին ազատ միջոցում պատրաստված մի կրկնա-յանցանքի :

Քաղաքակրթված աշխարհը չէ կարող երկու անգամ իրարու վրա անսպասելի պաշտպանել և արտօնել որ այս դժբախտ ժողովրդի արեւը չի պէտք թափվի :

Ես անգիտակից չեմ թէ, Սուլթանը սիրիքութեան հասած լրբութիւնը եւ համարձակութիւնը ունի հայերին մեղադրել իրենց գիւղերը այրելու եւ իրենց կանանց եւ աղջիկներին բռնաբարելուց յետոյ սպանելու մէջ, միայն Սուլթանին անիրաւ հանելու հանձնքից զրկված, Դիւանատանց մէջ խօսում են ֆէտայիների մասին, որոնց լաւ մէջքերի վրա չը գիտեմ ինչ տեսակ կատարութիւն բարգելը հանելի է Մեծ Մարդասպանին :

Շատ ճիշդ է որ արեւմտեան դիւանագիտութեան անշարժութիւնից առաջացած չարագանց տանջանքը եւ յուսահատութիւնը Սասունի հայերին ստիպել են իրենք իրենց օգնելու եւ անհրաժեշտ դիմադրութիւնը պատրաստել : Աւ շատ կարելի է որ Զեքիի քիւրսերից, համարձակներից եւ կանոնաւոր զօրքերից կազմակերպած յարձակումը ետ մղելու իրարանցումի մէջ ֆէտայիները պարտաւոր լինէին, ինչպէս երբեմն Մակեդոնիայի կոմիտաճիները իրենց շուրջը ամայութիւն ստեղծելու համար իրենց օժանդակները գոհել :

Բայց աշխարհի բոլոր սովիտտութիւնները ի միասին չեն կարող իրենք այս տեսակ կացութեան պատասխանատուութիւնից Սուլթանին ազատել, եւ, նրա ետեւում այն պետութիւններին, որոնք ապահովել են Սուլթանի անպատիժ մտայն :

Ես ուզում եմ հաւատալ այժմ եւս աւելի, որ պէտք է եւ բաւէ, միայն որ ինքիւնի զաշնագրութիւնը ստորագրող պետութիւնները, որոնք իրենց խիղճերը ծախած չեն Բ. Գրան հետ չահակցական պայմաններ կնքելով, մի հաւաքական քայլ անեն Պոլսում, արեւան հոսումը դադարեցնելու համար :

Թրանսական մի նաւարածին հասարակապետութեան զրոյակը զբօսնցնում է Պէյրութի շրջանում, կը սիրեմ կարծել թէ՛ դաւանանք չէ դարձած մեզ համար, որ մեր զբահաւորները միայն կարող են առնել ինքնի կորցել, բայց չեն կարող պահանջել որ յարգուի մարդկութիւնը, մարդկային իրաւունքները, եւ հաւատարմ զէպի զաշնագրութիւնները :

Աւելի քան երբէք համոզված եմ թէ, Փրանսական բարձրագոյն զեմից արտասանված մի զօրաւոր խօսք

պէտք է երազել մենակեաց թշուառականին ստիպել ժողովուրդը որը միայն չահագործել է եւրոպայի ստորութիւնը, իր գազանութիւնների համարձակութեան չափը բարձրացնելով մեր խորհրդների վարտութեան համեմատ :

Ուրեմն կարելի եղածին չափ շուտով վիճարանութիւնը պէտք է սկսվի երեսփոխանական ժողովի մէջ :

Արտաքին գործոց պ. նախարարը ինձ իմացրեց որ մի քանի օրվան պէտքը ունի մի ընդհանուր քաջատանել պատրաստելու համար :

Արդարութիւնը նա հայաստանի վերաբերմամբ պատուաւոր կերպով արբերվել է իր նախորդից, որ իստրեբայութիւնը մեղաակցութեան հասցրեց : Ես սիրով նախարարին տալիս եմ իր խնդրած կարճ ժամանակամիջոցի վարկը :

Այսօրվանից ժամադրութիւնը սրված է : Այս շաբաթը չանցած Թրանսիան այս խնդրում միացած, պէտք է ցոյց տայ Արաբի շահութիւնը որ թագակիր դահիճի ոտքն անգամ կարող է սափլ արեւան մէջ եւ թէ արեւմտեան ղեմակրտան չէ ուզում նոյն իսկ լաութեամբ ու թմարածութեամբ պատասխանատու մնալ սպանութեանը մի մարտիրոսացած ժողովրդի, որի զխաւոր յանցանքն է Անատոլիայի առաջին սայսափններից չը խորտակվիր :

Թրանսիա սր Պրեսսուսի (Հելուստի)

ՆԱՄԱԿՆԵ՛Ր ԱՍՍՈՒՆՅՈՒՆԵՐՈՒ Պ Ե Տ Ե Ր Է Ն

Ա.

Սասուն 9/23 ապրիլ 1904

Անցեալ շաբթու ձեզ նամակ մը զրկեցի, որուն մէջ նկարագրած էի սասունցիներուն կոխը թուրքերուն ղեմ մարտ 31ին եւ վերջիններուն ետ մղու իլը. Շէնիկ եւ Սեմալի ժողովուրդն ու իշխանները այլ կռուի միջոցին քաջութեան մեծ փաստ մը ստուին :

Օրէցօր մեր զրութիւնը սպառնալի կը դառնայ. քիւրսերը կը կեդրոնանան մեր շուրջը. գմը շրջապատելով. կատաղարութիւնն ալ միւս կողմէն մեծ քանակութեամբ զօրք հանած է. շորորդ գորարանակր ամբողջովին հոս պիտի գոյ մտնուի :

Վալիի Մուշ եկած է. Բուրքերը կատաղարութեան զիմումներ բրած են արտօնուելու որ բոլոր հայերը ջնջեն : Ընդհանուր կոտորած է կը վարացուի :

Մուշ եւ իր գաւառը կը գտնուին ծանր կացութեան մէջ. ոստիկանները եւ հարկահաւաքները ժողովուրդը ամեն տեսակ կեցիքում երուկենթարկեն. զինուորները ու քիւրսերը անոնց հետ միասին կը գործեն : Հայ Ինճօնցիակ, Արդիւնք, Խորագիլը, Հարդիւն, Գիւլիլի Մը սուր, Գիւլիլի-Կիւման Գիրմաւ, Շէնիլիմիկ գիւղերը հրդեհուած են :

Հայ քնակաւորութիւնը հետզհետէ կը համախմբուի : Մենք մեր շարքերը կը սեղմենք. կիմանամ թէ՛ քիւրսերը կը մտնենան, վայրկեան սեղանակեան կիւր կըսպասուի :

Բ.
14/27 ապրիլ 19 4

Սասունը կրակի մէջ է. Շէնիկը հրդեհուած է. 8/22ին, բնակիչները քաշուած են Սեմալ :

12/25ին վալիի քանի մը հազար զօրքով եւ Բիթլիզի ու Մուշի առաջնորդներու հետ միասին, ինչպէս եւ կարեւոր յայերը կը հասնին Լա տիկեանցիկ :

Վալիի գալէն օր մը առաջ քիւրսերը, համարիչները ու ոստիկանները բազմութեամբ կը համախմբուին քրդական Շէն գիւղ եւ կը պատրաստուին յարձակիլ Սեմալի վրայ. եւ կը յառաջանան մինչեւ Շէնիկի աւերակները : Մեր ֆէտայիները եւ ժողովուրդը տեսնելով յարձակման այդ պատրաստութիւնը Հարայի շրջանը-Արմենակ) հրամանատարութեամբ կը յարձակին քիւրսերու եւ զինուորներու վրայ. եւ գտնոնք կը հաւանեն մինչեւ այն տեղ ուր կիւրսեղի ունեցաւ մարտ 31ին, Զինուորները զէպի գաւառ կը փախին, իսկ քիւրսերը Շէն գիւղը :

Այս երկրորդ ճակատամարտի մէջ մենք կուրենանք զիս Ալեանցի Տօնօ Հերթօն պատ. քաջ երիտասարդ մը : Թշնամին բազմաթիւ կորուստներ կուտայ թէ սպանուած է թէ վիրաւորուած :

Ապրիլ 12, երեկոյեան ղեմ Սեմալ իրրեւ պատուիրակ կը զրկուի Ս. Օ. ան վանքի վանահայր Առաքել վարդապետը, որ իր հետ կը բերէր պատրիարքին եւ Բիթլիզի ու մուշի առաջնորդներուն նամակները : Անոր պատասխանելու համար մենք զացինք Գեղաշէն ուր մենք պիտի հաւաքուէինք 13ի առաւօտեան մէկ ժամին : Մենք կուպակէինք Հրայրի գաւառն, երբ յանկարծ լսուցաւ ճակատամարտի ձայները :

Վալիին բանակցութիւնները լոկ լարուած թակարթը թագցնելու նախապաւ էր. իր միակ նպատակն էր զմեզ բոլորիս հաւաքուած մէկ հարուածով մը ոչնչացնել : Ժամի մէկին զինուորները եւ աշխրկիները յառաջ կը խաղան զէպի Շէնիկ եւ անկէ ալ Սեմալ, Հրայրը իր հրոսամարտով Սեմալ կը գտնուէր. նա կը նկատէ որ թշնամին յարձակողական դիրք կը բռնէ, ժողովրդի հետ միասին զէպի բարձրութիւնները կուզուի. Սեմալն ալ կը հրդեհուի :

Մեր ֆէտայիները ուզելով ծածկել Սեմալի քնակաւորութեան նահանջը կուրահանու բարձրութեանց վրայ դիրքեր գրաւելու. իսկ Սեմալի հրդեհն ալ կարգիլէ անոնց հետեւիլ թշնամին զորոտութիւններուն :

Թշնամին Սեմալի վրայ 15 անգամ թնդանօթ կարճակէ և ապա ամեն կողմէն կը խուժէ գիւղին մէջ, մեր բնկիւրները կը նահանջեն զէպի Չայ. ուր և կուպանուին մեր թանկագին ընկեր Հրայր, զինուոր Ալեյցիպայի Մասուն. Սեմալի Երպոն և ժողովրդը զէն քանի մը մարդիկ : Թշնամին կը յառաջանայ մինչև Կէլի-Կի. գան ուր ֆէտայիներու հրոսախմբերը վրայ կը հասնին և կը յարձակին զինուորներուն վրայ : Վերջիններս կուրելով հանդերձ փախուստ կուտան : Ֆէտայիները բաւական յառաջ կը մղուին : Այս ճակատամարտին մէջ կը վիրաւորուին Սեպուհ, Տիգրան և ուրիշ քանի մը զինուորներ : Թշնամին կորուստ կուրենայ 100 է աւելի սպանուածներ և բազմաթիւ վիրաւոր-

եակներ :
Այսօր Մուշն նոր զինուորներ եկած են. Թեքուս վաղը նոր կիւրս ունենանք :

Գ.
Մուշ 18 ապրիլ 4 մայիս 904

Վալիի Ֆէլիտ փաշան Մուշ հասնելուն պէս, ապրիլ 12ին, ուղղուել է զէպի Լեւոր և կոտորածի հրաման է տուել, Շէնիկ և Սեմալ գիւղերը հրդեհուելու են, կատարի ճակատամարտ մը տեղի ունեցնելու է. Երբ Առաքել վարդապետը կը գտնուի եղբոր Գեղաշէն, բանակցութեան մէջ, զինուորները կը պաշարեն Սեմալը և անմիջապէս մարտը կակտուի : Մենք անփոխարինելի կորուստ մը կուրենանք յանձին Հրայրի : Ընկերները անոր խորհուրդ կուտան երթալ իր սուրը և իրենց ձգել պատերազմը ժողովրդի հետ շարունակել :

Բայց ան կը պատասխանէ թե այսօր կը մեռնիմ :

Երբ Բայրուրդի Սեպուհը կը վիրաւորուի, կը քաշէ իւր սուրը և կուրծքին հարուած մը կիջցնէ ըսելով. «Աստուծոն հաճելի չի լինի, որ ես ողջ թշնամու ձեռքը լինամ» :

Բայց ընկերները զայն ողջ կիլիւրակ կը հասցնեն :

Հրայրի դիմակն ալ մեծ շքով կէլիւրակ կը կրտարուի և կը թաղուի Սեւրը Աղբիւրի քովը :

Հոս կայ 20 վաշտ զօրք, որոնց 12 ուղղուած են զէպի Լեւոր, առանց հաշուելու քիւրսերը որոնց թիւը այսօր 10 00ի կը հասնի. Սասունի զիւրդներն ալ մեզի օգնութեան հասան, վերջ յիշած ճակատամարտի մէջ անոնք ալ բաւական զինուոր և քիւրս սպանած են, Հարիւրէն աւելի զինուոր և երկու անգամ աւելի քիւրս սպանած են : Դեռ վիրաւորներուն թիւը յայտնի չէ. վիրաւոր քուպաներ Մուշ տեղափոխուած են, և նոր ուժեր գրկուած են :

Մինչեւ հիմա ֆէտայիներէն և սասունցիներն միայն քան հոգու կորուստ ունենք : Մենք պաշտօնական յիշատակագիր մը զրկեցինք Բիթլիզի Անկիլիական իւպատոսին, որպէս զի ան ալ իր կողմէն Պոլսու հեռագրէ Սուրհանդակ մըն ալ էր գրուած : Կուպատսին զրկուած ենք :

Քիւրսերը և թուրքերը թափնը և կործաներ են Սասունի զիւրդը, քիւրսերը ծախելու տարա ծեն Սեմալի եկիղցիները սկիւր և բուրժաւը :

Այժմ ծախուել է քառասուն փառայի, կովը և եզը երեքու կէտակն ֆրանքի, թէ քաղաքին և թէ դաւալին մէջ կենալը անտանելի է : Մենք բոլորս ամբողջովին բազար երթալէ զազրած ենք և այժմ, որ կիրակի է մենք չը պէտք է կարենանք սնել դուրս ելլալ նոյնիսկ առաւօտեան : Բայց ամենքն ալ պատրաստ եմ մինչեւ վերջին շտապ կուրել, քան թէ տանջուիլ թուրքերու և քիւրսերու բռնութեան տակ :

Թեքուս ալ իմ վերջին նամակս լինի :

ԱՋԱՍՏԻՔԱՆ ՏՈՒ
Յուշ րիւս
Բարեկամս Պ. Գ. Արարեանցին
ի ձիւրդի

Պանդուխտ, միայնակ, ամուսն անց չիղումներու մէջ նստած, սեւեկիս պատուհանէն դուրս կը զլտել լուս

նակ գիշերը... Ինչ ալ հրապուրել է տարածման թեան միայն...

Ինչ ընծ տիկին... Գլխիս ինչո՞ւ չի գացիր... Ինչ կայ...

Ինչ մոզիք է այն... Յուսանկան արևը յորձանք տուա...

Սենեկին հարաւ արեւելեան ուղիով թեամբ...

Ստեփան և սրտի տարածման ամփոփումն մէջ...

Ո՛հ, ո՞վ գիտէ տիկին... Ո՛չ բայց պարոն, վրայ դրաւ...

Ո՛չ բայց պարոն, վրայ դրաւ... Ինչպէս նախորդ թղթակցութիւններով...

Խաճ գիտակցութիւնն է գոր կրտսերը... Ինչպէս նախորդ թղթակցութիւններով...

Ո՛հ ո՛չ, երբեք չի մտածես իմ գիտողութեան սխալ կողմը...

Ինչպէս վերաբերուիս քեզ... Ինչպէս վերաբերուիս քեզ... Ինչպէս վերաբերուիս քեզ...

Ու արեւնոտած սրտով կը մտածեմ թէ արդեօք դեռ որքան ժամանակ պիտի սահի...

Ձակոզիկ եզիպոս

ՏՈՊՈՒՅԻ ԱՉԳ. ԿԵԱՆՔԻՆ

Ինչպէս նախորդ թղթակցութիւններով մտածանք էր, այս անգամ կուգամ նորէն վեր հանել Տօպրիչի...

ազգայնոց մէկ գովելի ձեւնարկն եւս... Երկար ժամանակէ ի վեր ընդհատուած...

Բաղաճիս Թաղական Խորհրդոյ ընտրութիւնը տեղի ունեցած է որուն ինքնակոչարար վերնորոշում անդամները...

Կան գոյծադիր մարմինը անուշադիր թողուցած է այս անհնակարեւոր կէտեր...

Ընտրողական ժողովը աւելի չաւարտի ընէր, եթէ փոխանակ այդպիսիները...

ՄԻՋԵՐԿԻՐԱԿԱՆԻ ԱՓԵՐԷՆ (100) Թուրքիա, 30 մայիս 1904

Սիրելի Հայ Եղբարք, Գանի ամիսներէ ի վեր շատ մը տեղերու հետաքրքրութիւնն ու անձկագին յուզումները...

սիրս արեւելք Տարօնի լեռնաշղթային սեւեռած ենք. երեւակայութեամբ կը դիտենք Սասունի հայ քաղերն, որոնք թառած անմատչելի ժայռերուն վրայ, կոպասն ահռելի ճգնաժամին:

Ահ, թէ կարենայինք մօտիկն ըլլալ անոնց, մենք ալ պէտք է խառնէինք մեր արիւնը անոնցինին սրբազան կռիւը մղելու համար:

Կաղօթենք որ Ած. պահպան լինի այդ քաղերուն եւ կարուկ ընէ անոնց սուրբ:

Սա պարագային անգամ մը եւս Հ. Յ. Դաշնակցութեան գործունեայ անձնուէր ու դրական ախտաբանները, հայրենիքի ազատութեան համար երիւան կուգայ ամէն տեղ, կը հաւատանք թէ հայ ազգը շուտով պիտի ճանչնայ իր անձնուէր զաւակնն Ա. Ծովագի:

ՀԱՅՎԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՍՆԵՐ

Սասունի դէպքերը մեծ իրարանցում ձգած են Կովկասեան հայերու մէջ: Ռուս կառավարութիւնը, որ զաղտնի շրջաբերականով մը միացած է Սուլթանին հետ, սահմանադիւր իշխանութեանց հրամայած է հայերուն արգելել սահմանը անցնել իրենց հաւատակիցներուն օգնելու համար: Կովկասի հայ զինուորները խստութեամբ կը հսկուին:

Թուրք ազդեցութեան կիմացուի թէ վանայ նահանգին մէջ 30 հոգիէ բաղկացած հայ հրոսախումբ մը ոչնչացած է թուրք զօրքերէն:

Պոլսէն վրէննա կը հեռագրեն թէ Սասունի մէջ քանի մը հարիւր հայ կոտորուելու լուրը կը հաստատուի:

Անգլիական դեսպան Օ. Բոնոր քանի մը անգամ Սուլթանին հետ տեսակցութիւն ունեցած է հայերու կացութեան մասին:

Պոլսէն կը հաղորդեն որ վանայ մէջ ձերբակալուած են շորս հայ յեղափոխականներ: Լուրին մէջ ձերբակալուածներուն անունները կը պակսին:

Ստոյգ և պաշտօնական ազդեւրէ կիմանանք թէ կէլի-հիւզանէն Սասունցի բոլոր երիտասարդները, երիտասարդ կիները և աղջիկները գիւղին գրաւելէն առաջ Անգրանիկի ու միւս ապստամբապետներու հետ լեռները քաշուած են:

Տիրապէքի բերտերը գրգռուած են հայերու գէմ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դանուրի սահմաններու խնդիրը Ռուսներու և Պուլկարիոյ միջեւ կարգադրուած է:

Ըստ այդ կարգադրութեան դանուրեան վեց կղզիներ Պուլկարիոյ պիտի պատկանին, իսկ սիւրը Ռուսներու: Կղզիներուն

տարածութիւնը հաւասար են գրեթէ:

Էտիրէնէի գաղթականները պուլկար կառավարութեան խնդրագիրը մը տուած են, որով իրենց տեղերը վերադառնալու համար նախկին և բարոյական ապահովութիւն կուգեն եւրոպական պետութեանց միջամտութեամբ:

Սօֆիայի թերթերը կը գրեն թէ՛ յունիս Յին պուլկար ազգային պանքան իր գոյութեան 25 ամեակը պիտի սօնէ:

Լուր կայ որ Սօֆիոյ ռուսական դեսպան Պահմէտիէվ ուրիշ պաշտօն մը ստանալու պատճառով Պուլկարիայէն պիտի հեռանայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռ. Դուրը մերժած է յունահրեւոյսականներուն տուրքի խնդիրը իրաւարար ատենի մը յանձնել քննելու համար: Յոյն կառավարութիւնը այս առթիւ խնդրած է պետութեանց դեսպաններուն միջամտութիւնը:

Ռ. Դուրը պաշտօնապէս հաղորդած է դեսպանութեանց որ Մակեդոնիոյ ժանտարմաններուն թոշակին առահովութեան խնդիրը ստորագրուած է ելեւմտից նախարարի և Պանք Օթոմանի կողմէն:

Սուլթանը աստրիական կայսեր, Կոլուխովսքիին հաշկաւոր ճառէն վերջը, իր պետութեան առաջին կարգի շքանշանը նուիրել է Պաշտօնեաներէ կազմուած յանձնախումբ մը այդ շքանշանը պիտի տանի Պրանս Ժողովին յանձնելու:

ՌՈՒՍՄԱ

Ռուսական սինոդը մեծ իշխաններուն արգելած է ապահարկան ստացող կիներու հետ ամուսնանալ:

Սեւաստաբօլէն Պերլինի թերթերէն միոյն կ'հաղորդեն թէ Սմօլէնքը զրահաւորին մէջ պայթում տեղի ունեցել է, որ և մեծ զնաւներ պատճառել է մանրամասնութիւնները կը պակսին:

Պր. Յայթունկա թերթը կիմանայ որ Ռուսիոյ և Գերմանիոյ միջեւ վաճառականական վերջնական համաձայնութիւն կայացրել է:

Գերմանիոյ սահմանները ազատ պիտի ըլլան ռուսական բոլոր սեւակի անասուններու համար:

Բալթիկայէն Պերլին կը հեռագրեն որ 12 զինուորներ, 33 և 34րդ. զնդերէն հրացանի բաժնուներ են:

Ատոնք են ձերբակալուած այն արեւ բեր ուրիշ զինուորներու կը

համոզեն եղբր ապստամբի Մարագոյն Արեւելք զրկուելուն համար:

Մայիս 24ին Բեթերսպուրկէն Պերլին կը հեռագրեն թէ Ս. Պողոսեան զինուորական պարոցին մէջ խռովութիւններ ծագել են: Մպտեալ լրտես մը կը մանայ հոն հասկնալու համար թէ որոնք են պատուած կայսերական տան անգամներուն պատկերները: Սակայն ոչակերտները խնդիրը կը հասկնան և լրտեսը կը վառեն:

ՍԵՐՊԻԱ

Պէլկրատէն մայիս 24ին կը հեռագրեն որ պաշտօնական թերթը կը յայտարարէ թէ յունիս մէկէն սկսեալ Պուլկարիոյ և Սերպիոյ սանձաններուն մէջ անցագրին գործածումը պիտի դադրի:

Պաշիչ կապառնայ ամբողջ դահլճին կողմէն հրամարական տալ, որով հետեւ նախարարական խորհուրդը հաւանութիւն չի տար անոր կազմած դիւանագէտ նոր պաշտօնեաներու ցանկին:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

«Վէջերնա Թոշիթա» պուլկար թերթը մայիս 20 թիւին մէջ հետեւալը կը գրէ:

«Թերթը արդէն մամուլի տակ էր, երբ Պուրէշէն թելեֆօնով մեզ հետեւալը հաղորդեցին: Լոնտօնէն ստացուած հեռագիրներու համեմատ ճարտարները կատարի յարձակումէ մը վերջը գրուած են Թորթ-Արթուրը: Այդ ճակատամարտին մէջ երկու կողմէն 11 հազար սպաննուած և վիրաւորեալներ կան»:

Թերթին խմբագրութիւնը ընթացողներէն կը խնդրէ վերապահութեամբ վերաբերուիլ այս լուրին:

Ճարտարները սկսած են Թորթ Արթուրը ոմբակոծել Դալնինէն, որ ժէնէրալ Օքուին զինուորական զխաւոր կեդրոնի վերածուած է:

Թորթ Արթուրի և Դալնիի միջեւ պատերազմական նաեբը անդադար կը շարժին պաշտպանելով ճարտարական զօրքերու տեղափոխական շարժումները:

«Տէլը Մէլուի Բեթերսպուրկի թղթակիցը ստոյգ ազդեւրէ կիմանայ թէ՛ Ամիրալ Ալէքսիէվի ջանքերն ծարր համոզելու որ Գուրօթթիներին հրամայէ Թորթ Արթուրը ազատելու միջոցներ ձեռք առնէ, անյալող եղած են: Ծարր միայն Գուրօթթիների հրամայած է ուղղուել դէպի Թորթ Արթուր, եթէ միայն զըլխաւոր հրամանատարը այդ քայլը նպատակայարժար դատէ:

Գուրօթթիներ պատասխանած

է որ այդ անկարելի է և ծարրալ զայն ազատ ձգած է իր քայլերուն մէջ:

Մայիս 27ին Հոմի մէջ սեւեռութիւն ստացուած է որ Թորթ Արթուրի պաշարումը թէ ծովէն և թէ ցամաքէն անցեալ շաբաթ օրուրէն սկսուած է, և դեռ կը շարունակուի: Ճարտարք 24 անգլիական մղոն տարածութեամբ կիսաշրջանակ մը գրուած են Բ. Արթուրի ամբողջութեան առջեւ:

Իմացի բարձրութիւնները արդէն գրաւուած են ճարտարքներու կողմէն ամբացուած և թնդանթներով զինուած: Սմեն վայրկեան վճռողական ճակատամարտը կսպասուի:

Կլօպ թերթը կը հայտարարէ որ ռուս ժէնէրալ Նիվալկուերկ իր զօրքնտովը պարտուած է ճարտարներէն:

Ռուս ծովային վարչութեան պետ ամիրալ Վիլիսիուս Մաթէն թերթի թղթակցին յայտարարած է թէ Վիլիսիուս ծովակալի տեղեկագիրն համաձայն Ռէթվիզն, Յէսարէվիչ և Բալտա զրահաւորները նորոգուած են և պատրաստ: Բալթիկեան նաւատորմը զամեն ժամ պատրաստ է մեկնելու: Եթէ Թորթ-Արթուրը պարտուի ճարտարից ջամբային զօրքերէն, այն ատեն Բալթիկեան նաւատորմը ուղղակի վախժվաստօք կը մեկնի:

Միքստօն հրամայած է երեք նոր գունտ կազմել և զրկել հիւսիսային Քօթա վաւտիֆոթթօքին վրայ յարձակում գործելու համար:

Մօսկուայէն մայիս 26ին Պերլին կը հեռագրեն որ հոն օրեց օր անանկութիւններ կը շատնան:

Մայիս 26ին Բեթերսպուրկէն Պերլին կը հեռագրեն թէ ծարր Գուրօթթիներէն Լակոնական ոճով հետեւեալ հեռագիրը ըստացած է:

«ՂԻՄԱԻ»

Բեթերսպուրկի ինչպէս և Պերլինի մէջ այս հեռագրին զանազան բացատրութիւններ կուտան:

Վիլսուոր հրամանատար Գուրօթթիներ որոշած է դէպի հարաւ երթալ: Չինուորական կցորդները հրաման ստացած են պատրաստ ըլլալ մեկնելու:

Թօքթօն նոր զօրքանակ մը եկել է, որ ցամաք պիտի ելնէ Դալնի և Գինչուի քովերը: Թօքթօն եկած տեղեկութիւններուն համաձայն այժմ ճարտարքները Թորթ Արթուրի և Գուրօթթիների դէմ երկու հարիւր հազար զօրք պիտի ունենան:

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница «Възможность» Варна